Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 12-ի N 1990 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են շահառուներին միջոցառման շրջանակում աջակցություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ու հապավումներն ունեն միջոցառման մեջ տրված իմաստները:

3. Միջոցառման շրջանակում աջակցություն ստանալու նպատակով անձը՝

1) առցանց եղանակով դիմում ներկայացնելու դեպքում մուտք է գործում www.e-social.am կայքէջ, որտեղ ներկայացնում է դիմում՝ համապատասխան դաշտերում լրացնելով իր անունը, ազգանունը, հանրային ծառայության համարանիշը, տեղական բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև նշում է կատարում միջոցառման շահառու դառնալու համար իր տվյալները մշակելու, օգտագործելու և փոխանցելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին.

2) ՄՍ ծառայությունում դիմում ներկայացնելու դեպքում ՄՍ ծառայության ցանկացած տարածքային ստորաբաժանումում ներկայացնում է գրավոր համաձայնություն՝ իր վերաբերյալ սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալները մշակելու համար:

Առցանց եղանակով ներկայացված դիմումը հաստատվում է դիմումատուի բջջային հեռախոսահամարի և սարքի կիրառմամբ՝ «Ես Եմ» նույնականացման հարթակի միջոցով, իսկ առձեռն դիմումը՝ դիմումատուի ստորագրությամբ:

4. ՄՍ ծառայությունում դիմում ներկայացվելու դեպքում ՄՍ ծառայության աշխատակիցը սույն ծրագրի համար իրեն տրված օգտանվան և գաղտնաբառի

կիրառմամբ դիմողի՝ սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված տվյալները մուտքագրում և նույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված համաձայնության ստորագրված տարբերակը լուսապատճենում և կցում է ծրագրային համակարգ: Դիմումն ընդունվելուց հետո համակարգն ինքնաշխատ եղանակով տվյալների շտեմարանների փոխգործելիության միջոցով իրականացնում է դիմումատուի կողմից ներկայացված տվյալների ստուգում հետևյալ ուղղություններով և հաջորդականությամբ ինքնաշխատ հարցմամբ՝

1) բնակչության պետական ռեգիստրից ստուգվում են դիմումատուի անվան, ազգանվան և ՀԾՀ-ի համապատասխանությունը, դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու կամ Հայաստանի Հանրապետության ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունենալու հանգամանքը.

2) անձնավորված հաշվառման համակարգից ստուգվում է դիմումատուի՝ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ աշխատող լինելու հանգամանքը.

3) վարկային բյուրոյից ստացվում է դիմումատուի անհուսալի վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝

ա. միայն անհուսալի վարկ(եր) ունենալու մասին փաստը,

բ. վարկատու կազմակերպություն(ներ)ը,

գ. անհուսալի վարկերի քանակը,

դ. անհուսալի վարկ(եր)ի հանրագումարը,

ե. յուրաքանչյուր անհուսալի վարկի նույնականացման կոդը:

5. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հաջորդականությամբ ստուգման արդյունքում անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում դադարեցվում է հաջորդող ստուգումների իրականացումը, և համարվում է դիմումը մերժված: Դիմումը մերժվում է նաև, եթե դիմումատուն արդեն հանդիսանում է շահառու: Դիմումի մերժման և դրա պատճառների մասին դիմումատուի էլեկտրոնային փոստին և բջջային հեռախոսահամարին ուղարկվում է ինքնաշխատ ծանուցում:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ինքնաշխատ ստուգումների արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում (այդ թվում, եթե դիմումատուն դիմել էր ավելի վաղ և չէր ճանաչվել շահառու) դիմումի

բավարարման և շահառու ճանաչվելու մասին դիմումատուի էլեկտրոնային փոստին և բջջային հեռախոսահամարին ուղարկվում է ինքնաշխատ ծանուցում:

7. Միջոցառումն ուժի մեջ մտնելուց հետո 5-րդ աշխատանքային օրվանից յուրաքանչյուր օր համակարգի միջոցով ՄՍ ծառայության կողմից ձևավորվում է շահառուների ցուցակը, որը յուրաքանչյուր օր «Microsoft Excel» ծրագրի ձևաչափով փոխադարձ համաձայնությամբ էլեկտրոնային որևէ եղանակով ուղարկվում է ՀԿԱ ծառայությանը, որի հիման վրա ՀԿԱ ծառայությունը շահառուների ցուցակը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում վարկավորողի կողմից ներկայացված հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում շահառուի (պարտապանի) աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) պահվող (բռնագանձվող) չափը սահմանում է 20%, եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ: Սահմանված բռնագանձման նոր չափը շահառուների մասով կիրառվում է ՀԿԱ ծառայության կողմից շահառուների ցուցակը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից և գործում է 24 ամիս ժամկետով:

8. Միասնական սոցիալական ծառայությունը յուրաքանչյուր ամսվա 25-ին համակարգի միջոցով իրականացնում է շահառուների՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտի) գծով նախորդ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի գումարի հարցում, իսկ արդյունքներն ինքնաշխատ պահպանվում են համակարգում՝ շահառուների շտեմարանում: Ընդ որում՝ նշված գործողության հետ մեկտեղ՝ համակարգն ինքնաշխատ իրականացնում է շտեմարանում առկա շահառուների տվյալների թարմացում, և եթե ըստ թարմացված տվյալների շահառուն այլևս չունի անհուսալի վարկ (ամբողջությամբ մարվել է անհուսալի վարկը կամ օրենքով սահմանված հիմքով պարտավորությունը դադարել է), ապա շահառուն շտեմարանում ստանում է «Ավարտվածի» կարգավիճակ, և այդ պահից դադարում է շահառուի գծով աջակցության տրամադրումը:

«Ավարտված» կարգավիճակով շահառուների մասով համակարգում հետագա հարցումներ և թարմացումներ չեն իրականացվում:

9. Սույն կարգի 8-րդ կետում նախատեսված գործողությունը կատարելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ՄՍ ծառայությունը համակարգում ինքնաշխատ եղանակով ձևավորում է աջակցություն ստացող շահառուների ցուցակը: Շահառուների ցուցակը կազմվում է «Microsoft Excel» ծրագրի ձևաչափով, որում ներառվում են հետևյալ տվյալները.

1) շահառուի անունը, ազգանունը (հայրանունը).

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը.

4) վարկավորող յուրաքանչյուր կազմակերպության անվանումը, որտեղ շահառուն ունի անհուսալի վարկ.

5) յուրաքանչյուր անհուսալի վարկի վարկային կոդը.

6) անհուսալի վարկի մարմանն ուղղվող աջակցության գումարի չափը (հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ը):

10. Շահառուների աջակցության ցուցակը 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (Սի-Բի-Էյ-Նեթ ֆինանսական տեղեկատվության փոխանակման համակարգ) ուղարկում է համապատասխան բանկերին և վարկային կազմակերպություններին, որից հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է աջակցության գումարների փոխանցումը բանկերի և վարկային կազմակերպությունների բանկային հաշիվներին: Ընդ որում, համաձայն համակարգի շտեմարանի տվյալների, եթե նույն շահառուն ունի անհուսալի վարկեր մեկից ավելի վարկավորողի մոտ, ապա շտեմարանում տվյալ շահառուի մասով ձևավորվող ցուցակում տվյալներն ինքնաշխատ գրանցվում են՝ ըստ վարկավորողի:

11. Շահառուին տրվող աջակցության գումարը վարկավորողի կողմից ուղղվում է շահառուի համապատասխան վարկային հաշվին, իսկ եթե նույն

վարկավորողի մոտ շահառուն ունի անհուսալի մի քանի վարկ, ապա բանկն աջակցության գումարն ուղղում է իր հայեցողությամբ ընտրված անհուսալի վարկի մարմանը:

12. Մեկից ավելի վարկավորողի մոտ անհուսալի վարկեր ունենալու դեպքում աջակցության գումարները վճարման ցուցակներում ինքնաշխատ բաշխվում են համամասնական չափերով՝ ըստ յուրաքանչյուր վարկավորողի մոտ ունեցած մասնաբաժնի՝ ընդհանուր վարկային բեռի մեջ:

13. Յուրաքանչյուր վարկի մարմանն ուղղվող աջակցության գումարը վարկավորողի կողմից ուղղվում է անհուսալի վարկի մարմանը՝ մինչև աջակցության գումարի ստացմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

14. Եթե անհուսալի վարկի մարմանն ուղղվող աջակցության գումարը գերազանցում է անհուսալի վարկի ամբողջական մարման համար անհրաժեշտ մեծությունը կամ անհուսալի վարկն ամբողջությամբ մարված է կամ օրենքով սահմանված հիմքով պարտավորությունը դադարել է կամ որևէ պատճառով (տեխնիկական կամ այլ) վարկավորողի կողմից հնարավոր չէ գումարը փոխանցել շահառուի վարկային հաշվին, ապա վարկավորողը ավել փոխանցված գումարը հետ է վերադարձնում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե նույն եղանակով, ինչպես որ ստացել է ՄՄ ծառայության կողմից:

15. Աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե ամբողջությամբ կատարվել է անհուսալի վարկային պարտավորությունը, լրացել է աջակցության տրամադրման ժամկետը, շահառու դառնալուց հետո 24 ամսվա ընթացքում, մինչև անհուսալի վարկի ամբողջական մարումը, շահառուն 3 ամիս անդադար դադարել է լինել (չի հանդիսացել) աշխատող կամ օրենքով սահմանված հիմքով պարտավորությունը դադարել է: Աջակցության դադարեցման մասին ՀԿԱ ծառայությունը փոխադարձ համաձայնությամբ էլեկտրոնային որևէ եղանակով 1 օրվա ընթացքում ստանում է տեղեկատվություն՝ «Microsoft Excel» ծրագրի ձևաչափով:

16. Աջակցության դադարեցմանը հաջորդող ամսվա 1-ից ՀԿԱ ծառայությունը վերացնում է շահառուի համար սույն կարգի 7-րդ կետով նախատեսված

բռնագանձման չափի կիրառումը և սահմանում է բռնագանձման ընդհանուր կարգով նախատեսված չափը:

17. Միջոցառման շրջանակում ավել վճարված դրամական աջակցությունը ենթակա է հետգանձման օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե անձը ինքը չի վերականգնում այդ գումարը պետական բյուջե և վճարման վերաբերյալ համապատասխան հիմքերը ներկայացնում ՄՍ ծառայություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ